ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՏԻՐ ՓԱՅԼԱԿ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՏԻՐ ՓԱՅԼԱԿ ԱՀԱՐՈՆԵԱՆՆ, ՈՐ Ի ՔԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ

Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնը, գնահատանքն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ ազգային-հասարակական կեանքում ամբողջանուէր ծառայութեան 50-ամեայ գործունէութեան Ձեր Ոսկէ Յոբելեանի առիթով, որի մասին խորը գոհունակութեամբ տեղեկացանք ԱՄՆ հայոց Արևմտեան թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Վահէ արքեպիսկոպոս Յովսէփեանից:

Տարիներ ի վեր մանկավարժի ազնիւ ու շնորհակալ կոչումով, անսակարկ նուիրումով Դուք ուսուցանել եւ հայեցի կրթութիւն էք տուել բազում հայ զաւակների՝ սերմանելով ու զօրացնելով նրանց մէջ հայրենապաշտ ոգին եւ ծառայութեան սէրը: Նշանակալի է Ձեր հասարակական գործունէութիւնը, ներդրումը նաեւ գրական-հրատարակչական, մշակութային ասպարէզներում ինչպէս Լիբանանի հայ կեանքում, այնպէս եւ ԱՄՆ փոխադրուելուց յետոյ:

Ի գնահատութիւն կէսդարեայ անձնուէր ու արդիւնաշատ Ձեր ծառայութեանց՝ սիրով շնորհում ենք Ձեզ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԳԻՐԸ՝

աղօթքով առ Աստուած, որ պարգեւի Ձեզ քաջառողջութեամբ ու կորովով լեցուն երկար կեանք, որպէսզի նոյն եռանդով, սիրով ու նուիրումով շարունակէք մասնակցութիւն բերել ազգային-հասարակական կեանքում: Թող Տէրը օրհնի եւ առաջ-

նորդի Ձեր ջանքերը՝ ի շինութիւն Քալիֆորնիայի հայ ազգային կեանքի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 7-ն Փետրուարի 2000 թ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 5